ՄԵԼՔՈՆՅԱՆ Ա. Ա., Ջավախքը XIX դարում և XX դարի առաջին քառորդին (պատմաքննական ուսումնասիրություն), Ե., 2003, «Զանգակ-97» հրատ., 500 էջ:

Աշոտ Աղասու Մելքոնյանի «Ջավախքը XIX դարում և XX դարի առաջին քառորդին (պատմաքննական ուսումնասիրություն)» աշխատությունը, որի դրույթների մեծագույն մասը հիմք են կազմել հեղինակի՝ վերջերս հաջողությամբ պաշտպանած դոկտորական ատենախոսության, բաղկացած է ներածությունից, 4 գլխից, վերջաբանից և հավելվածից: Այն եզրափակում է օգտագործված աղբյուրների ու գրականության ցանկը: Ներածության մեջ հետազոտողը խնդիր է դնում լուսաբանել Ջավախքի և հարևան Ախալցխայի, Ծալկայի շրջանների XIX դարի և XX դարի առաջին քառորդի պատմությունը: Այդ գիտական հիմնահարցը խորհրդային ժամանակաշրջանի պատմաբանների համար հանդիսանում էր «տերրա ինկոգնիտա», երբ կուսակցական վարագույրները ստիպում էին քողարկել սուր անկյունները կամ շրջանցել կարևոր ու սկզբունքային հարցերը: Առավել ևս , որ Ջավախքի պատմությունը շոշափում է հայ և վրաց ժողովուրդների, Հայաստանի ու Վրաստանի հանրապետությունների շահերը:

Ներածության մեջ աղբյուրների ու գրականության տեսությունը կառուցված է ժամանակագրական կարգով. XVI - XVIII դդ., XIX դ. սկիզբ, XIX դ. երկրորդ կես, 1918-1920թթ., խորհրդային ժամանակաշրջան, վերջին տարիներ: Ընդարձակ տարբերակով այդ ամենը ներկայացնում է հետևյալ պատկերը. XVI - XVIII դդ. Հյուսիսային Հայաստանի պատմությունը տրվում է թուրքական, XIX դարի սկիզբը՝ ռուսական աղբյուրների, XIX դարի երկրորդ կեսը՝ ցարական պաշտոնական տեղեկագրերի, «Կովկասյան օրացույցի» և Ե. Լալայանի, 1918-1920թթ. հայ-վրացական հարաբերությունները՝ Ս. Վրացյանի, Ա. Ջամալյանի, Պ. Աբելյանի, Ռ. Տեր-Մինասյանի ու այլոց աշխատությունների և մամուլի նյութերի հիման վրա: Վերջում տրվում են արխիվային ֆոնդերի տեսությունը և մամուլի նյութերը:

Գրականության ներկայացման հիմքում դրվել է տիպային մոտեցումը: Ընդ որում, հարկ է նշել, որ հեղինակը կատարել է որակապես բարձր, քննական մակարդակի աշխատանք՝ առաջ քաշելով տարբեր մոտեցումներ ու տեսակետներ: Ընդգծենք, որ վրաց պատմաբանների աշխատությունների այդօրինակ քննության մենք չենք հանդիպել: Դրանց քննությունը կրում է կոնկրետ, ճանաչողական և գիտական բնույթ:

Աշխատության առաջին գլուխը՝ «Ջավախքը հին և միջին դարերում», հիմնավորապես ներկայացնում է Ջավախքի ու պատմական Հայաստանի մյուս շրջանների՝ հարևան Ախալցխայի, Ասպինձայի և Ծալկայի՝ որպես հայկական նկարագիր ունեցող շրջանների պատմական անցյալը:

Երկրորդ գլխի՝ «Ջավախքը XIX դ. առաջին երեսնամյակին», առաջին ենթագլխում հեղինակը ներկայացնում է Էրզրումի սերասկերին ենթակա

Ախալցխայի փաշայության 24 գավառների վարչական բաժանումը XIX դ. սկզբին։ Շեշտը դրվել է նահանգի վարչաէթնիկ պատկերի բացահայտման վրա։ Սանջակների կառավարումն իրականացնում էին իրենց ենթակայության տակ 20-ից 60 գյուղ ունեցող սանջակբեյերը։ Տվյալների բացակայության պատճառով Ախալցխայի փաշայության բնակչության մասին բերվում են 1828-1829թթ. պատերազմին նախորդող տարիների տվյալներ, այն է՝ 34,2 հազ. ընտանիք կամ էլ 272 հազ. մարդ՝ միջինը հաշվելով 8 մարդ։ Մեծամասնությունը մահմեդականներ էին, որոնց մեջ զգալի էին նախկին քրիստոնյա վրացիներն ու հայերը։

Երկրորդ ենթագլխում Ախալցխայի փաշայությունը քննվում է XIX դ. սկզբի ռուսական ռազմաքաղաքական ոլորտում։ Հեղինակը գտնում է, որ միայն XVIII դ. վերջին Ռուսաստանն Անդրկովկասը միացնելու ուղղությամբ ձեռք է առնում առաջին լուրջ ռազմադիվանագիտական ջանքերը, որոնց գործնական քայլը դառնում է XIX դ. սկզբին Արևելյան Վրաստանի միացումը։

Հանգամանորեն ներկայացվում է ռուսական պաշտոնյաների գործունեությունը երկրամասում՝ Ռուսաստանի տիրապետությունն ամրապնդելու համար։ Ա. Մելքոնյանն իրավացիորեն նկատում է, որ 1803թ. Ռուսաստանի դեմ հանդես է եկել անդրկովկասյան տիրակալների՝ Երևանի խանի, Ախալցխայի ու Կարսի փաշաների կոալիցիան։

Երրորդ ենթագլուխը շոշափում է Ախալցխայի էյալեթի XIX դ. առաջին քառորդի ժողովրդագրական տեղաշարժերը։

Երրորդ գլուխը վերնագրված է՝ «Ախալքալաքի գավառը Ռուսական կայսրության կազմում (1828-1917թթ.)»։ Առաջին ենթագլուխը վերաբերում է 1828-1829թթ.։ Այստեղ ներկայացված են ռազմական գործողությունները, և ճշգրտվում է արևմտահայ գաղթականների թվաքանակը։ Ջավախքի միացման խնդրի քննության ժամանակ կարևոր է հաշվի առնել հետևյալ հանգամանքը։ Ռուսական ցար Նիկոլայ I-ի 1828թ. հունվարի 28-ի որոշմամբ Օսմանյան Թուրքիայի դեմ պատերազմում խնդիր դրվեց գրավել Ախալքալաքը, Ախալցխան և Փոթին։ Կար նաև հայկական մի նախագիծ։ Խ. Լազարևը խնդիր էր դնում միացնել Արևմտյան Հայաստանը Ռուսաստանին՝ Ախալցխայի, Կարսի փաշայությունները մինչև Վանա լիճ, ինչպես և Էրզրում ու Տրապիզոն՝ Մեծ և Փոքր Հայքի նախկին տարածքների առանձին հատվածները։ Այդ նախագծով նախատեսվում էր, իր աշխարհագրական դիրքի պատճառով, Ախալցխայի փաշայությունը միացնել Վրաստանին կամ Սոմխեթին (Վրացական Հայաստանին)։ Վերջապես, պատերազմի վերջում Դ. Պասկևիչը ենթադրում էր Թուրքիայի հետ ապագա սահմանների երեք տարբերակ. առաջին երկու տարբերակները նախատեսում էին ամբողջ փաշայության, իսկ երրորդը՝ մասնակի միացում։ Գերակայեց ցարի կամքը։

Երկրորդ ենթագլուխը ներկայացնում է վարչաժողովրդագրական իրավիճակը 1830-1860-ական թվականներին։ Բավական հանգամանորեն ներկայացվում են արևմտահայերի գաղթից հետո ժողովրդագրական փոփոխությունները։ Հարկ է հիշատակել, որ Անդրկովկասի Գլխավոր վարչության խորհուրդը 1846թ. հուլիսի 22-ի հրամանագրով որոշել էր Ախալցխայի գավառի Ախալքալաքի տեղամասը, որպես

գերազանցապես հայերով բնակեցված տարածք, միացնել Ալեքսանդրապոլի գավառին։ 1846թ. դեկտեմբերի 14-ի կանոնադրությամբ Անդրկովկասում ստեղծվեցին 4 նահանգներ՝ Թիֆլիսի, Քութայիսի, Շամախու և Դերբենդի։ Թիֆլիսի նահանգի մեջ մտցվեց Ալեքսանդրապոլի գավառը՝ Ախալքալաքի տեղամասի հետ։ 1848թ. Երևանի նահանգի ստեղծման նախապատրաստական աշխատանքների ժամանակ որոշվեց Ախալքալաքի տեղամասն անջատել Ալեքսանդրապոլի գավառից և միացնել Ախալցխայի գավառին։ Ուշադրության արժանի են հեղինակի կազմած գյուղացուցակները՝ 1838-1850թթ. և 1856-1878թթ. բնակչության թվաքանակով, ինչպես նաև Ախալցխայի հոգևոր կառավարությանը ենթակա եկեղեցիների անվանացանկերը։

Երրորդ ենթագլուխը վերաբերում է Ախալքալաքի գավառի կյանքին XIX դ. վերջին և XX դ. սկզբին։ Գավառի բնակչության ազգային կազմի վերաբերյալ բերվում են տվյալներ՝ XIX դ. վերջից մինչև 1914թ.: 1886թ. հայերը բնակչության 72,7 %-ն էին, վրացիները՝ 5,8 %-ը, ապա համապատասխանաբար՝ 1894թ.՝ 75,6 % և 5,6 %, 1897թ.՝ 72 % և 9,3 %, իսկ 1914թ.՝ 82,5 % և 7 %։

Գլուխ չորրորդ՝ «Ջավախքը 1917-1923թթ.»: Այստեղ տրված են Ժամանակավոր կառավարության ձեռնարկումները Անդրկովկասն ըստ երեք ազգությունների տեղաբաշխման սկզբունքի վերաբաժանելու ուղղությամբ, երբ հայկական կողմը հանդես եկավ հայկական երեք նահանգների (Երևանի, Ալեքսանդրապոլի և Ելիզավետպոլի) ստեղծման առաջարկությամբ։ Ընդ որում, Ախալքալաքի գավառը հարևան հայաբնակ մյուս շրջանների հետ պետք է միացվեր Ալեքսանդրապոլի նահանգին։ Շարադրված է 1918թ. թուրքական ներխուժման ժամանակ ախալքալաքցիների ինքնապաշտպանության և գավառը Հայաստանին միացնելու ուղղությամբ մղած պայքարի պատմությունը։ Հատուկ ուշադրություն է հատկացված հայ-վրացական սահմանային վեճերի հիմնահարցին։ Ուշագրավ են ՌԿ(բ)Կ Կովբյուրոյի կազմած հատուկ հանձնաժողովի նիստերում Ղարաբաղի, Ջավախք-Ախալքալաքի, Խրամի և Լոռու հարցերի քննարկման մասին հեղինակի վկայակոչած նյութերը։ Ջավախքի վերաբերյալ գիտական նյութերի շրջանառություն մտցնելը վկայում է Հայկական հարցի լուծման վերաբերյալ Խորհրդային իշխանության քաղաքականության նկատմամբ հեղինակի լայնախոհ մոտեցման կարողությունը։

Ընդհանուր առմամբ, Ա.Մելքոնյանը կատարել է հսկայական ծավալի աշխատանք՝ Ջավախքի XIX դ. և XX դ. առաջին քառորդի պատմության զանազան աղբյուրների ընտրության, համակարգման ու քննության ուղղությամբ։ Գրախոսվող աշխատությունը տքնաջան ու երկարատև աշխատանքի արգասիք է և միանգամայն նոր խոսք հայոց պատմության տակավին չուսումնասիրված հիմնահարցերից մեկի հետազոտման խնդրում։

ԹՈՒՆՅԱՆ Վ. Գ.
Պատմական գիտությունների դոկտոր